Ժամանակակից պայմաններում թվային մոդելավորում իրականացնող ծրագրային լուծումներում հնարավոր է ինտեգրել հրթիռի շարժման հավասարումները՝ թվային ինտեգրման հայտնի հաշվարկային մեթոդներով: Դրա համար անհրաժեշտ է ունենալ հրթիռի և նրանում եղած վառելիքի քառաիններցիոն բնութագրերը, վերջիններիս կախումը ժամանակից, հրթիռի աերոդինամիկական բնութագրերը և դրանց կախումը շրջահոսող օդի արագությունից, շարժիչի քառաիններցիոն կախումը ժամանակից, արձակող կայանքի և դրա ուղղորդողի բնութագրերը, ինչպես նաև արձակման տեղանքին և առկա օդերևութաբանական պայմաններին վերաբերող պայմանները: Հրթիռների քառաիններցիոն բնութագրերը կարելի է գտնել համապատասխան գրականությունում կամ հաշվարկել ավտոմատացված նախագծման համակարգերի միջոցով՝ դրանց եռաչափ մոդելների և դրանցում կիրառվող նյութերի մասին եղած տվյալների հիման վրա, իսկ հրթիռային

քարշուծային բնութագրերը կարելի գտնել ներքին ձգաբանության մեթոդներով՝ հիմնվելով դրանցում կիրառվող վառելիքի, այրման խցիկի և հրափողի երկրաչափական բնութագրերի վրա:


Աերոդինամիկական բնութագրերի ստացման համար կիրառվում են աերոդինամիկական խողովակներ, հրթիռների աերոդինամիկային վերաբերող տեսական մեթոդների և փորձարարական տվյալների համադրման հիման վրա մշակվող կիսաէմպիրիկ մեթոդներ [1-7], ինչպես նաև հեղուկների հաշվողական դինամիկայի մեթոդներով մարմնի շրջահոսումը օդով մոդելավորող համակարգչային ծրագրեր [8, 9]:

Հրթիռների թռիչքի թվային մոդելավորումը թույլ է տալիս կատարել հաշվարկներ ինչպես աղյուսակային կետերի միջակայքում՝ առանց մոտարկումների, այնպես էլ այդ կետերից դուրս, ինչը անհնար է աղյուսակների հիման վրա մշակված լուծումներում: Բացի այդ, հրթիռի օպտիմալ լուծումներին միտված նախնական և վերջնական մշակումների իրականացումը, ինչպես նաև հեռահարության աղյուսակների կազմումը՝ հենվելով միայն ռեալ փորձարկումների վրա, շատ ծախսատար է և ժամանակատար: Թվային մոդելավորումն էապես հեշտացնում է մշակման պրոցեսը և հանգեցնում ավելի բարձրորակ արդյունքի ավելի սեղմ ժամկետներում: Հետևաբար՝ հրթիռների մշակման համար դրանց արտաքին ձգաբանության հաշվարկներում թվային մոդելավորում կիրառելը և այդպիսի մոդելավորման մեթոդների կատարելագործումը խիստ կարևոր արդիական խնդիր է:

Հաշվողական սխեման: Հետազոտական աշխատանքի ընթացքում մշակված ծրագրային ապահովման մեջ առկա է հրթիռի աերոդինամիկական բնութագրերի կիսաէմպիրիկ հաշվարկային մաս՝ հիմնված հրթիռների աերոդինամիկայի տեսական և փորձարարական մոտեցումների [3-9] վրա: Առկա է նաև հնարավորություն այլ՝ փորձարարական կամ հեղուկների հաշվողական դինամիկայի մեթոդներով ստացված աերոդինամիկական բնութագրերի ներմուծման համար: Դա հրթիռների արտաքին ձգաբանության հաշվման համար մեր կողմից մշակված համակարգչային ծրագիրը դարձնում է ունիվերսալ՝ ցանկացած ձևի ու չափերի հրթիռի դեպքում, քանի որ բացառում է այն սահմանափակումները, որոնք պայմանավորված են աերոդինամիկական բնութագրերի հաշվման համար ծրագրում ներդրված կիսաէմպիրիկ հաշվարկային մասի կիրառելիության սահմաններով:

Մ-210Ֆ հրթիռի աերոդինամիկական դիմադրության ուժի C_x գործակցի կախումը թռիչքի արագությունից (Մախի M թվից)՝ ստացված աերոդինամիկական տեսական և փորձարարական մոտեցումների կիրառմամբ, ներկայացված են [10]-ում, իսկ [2]-ում բերված են արդյունքներ, որոնք ստացվել են հեղուկների հաշվողական դինամիկայի մեթոդների կիրառմամբ: Նկ. 1-ում բերված են վերոնշյալ

աշխատանքներում ստացված գործակիցների գրաֆիկները՝ առաջարկվող կիսաէմպիրիկ լուծմամբ ստացված գրաֆիկի հետ համեմատելու համար:



Նկ. 1. *Մ-210Յ հրթիռի դիմադրության ուժի գործակիցի կախվածությունը թռիչքի արագությունից՝ ներկայացված Մախի թվերով*

Մշակված համակարգչային ծրագիրն իրականացնում է հրթիռի թռիչքի դինամիկայի հաշվարկներ՝ հիմնվելով ստացված կամ ներմուծված աերոդինամիկական բնութագրերի, հրթիռի քաշափնեցիոն և դրա շարժիչի քարշուժային բնութագրերի վրա, շարժման փողային (1), ակտիվ (2) և պասսիվ (3) փուլերի համար համապատասխանաբար հետևյալ հավասարումների միջոցով.

$$v_0 = \frac{1}{m_0} \int_0^{t_0} T dt, \quad (1)$$


$$\begin{cases} \frac{dv}{dt} = \frac{T}{m} - C_x \frac{\rho_H v^2}{2} S - g \sin \lambda, \\ \frac{d\lambda}{dt} = -\frac{g}{v} \cos \lambda, \\ \frac{dx}{dt} = v \cos \lambda, \\ \frac{dy}{dt} = v \sin \lambda, \\ \frac{dm}{dt} = \frac{m_k - m_0}{t_k}, \end{cases} \quad (2)$$

$$\begin{cases} \frac{dv}{dt} = -C_x \frac{\rho_H v^2}{2} S - g \sin \lambda, \\ \frac{d\lambda}{dt} = -\frac{g}{v} \cos \lambda, \\ \frac{dx}{dt} = v \cos \lambda, \\ \frac{dy}{dt} = v \sin \lambda, \end{cases} \quad (3)$$

որտեղ v_0 -ն արձակման կայանքի փողից դուրս գալու արագությունն է, m_0 -ն՝ հրթիռի մեկնարկային զանգվածը, t_0 -ն՝ փողային փուլի տևողությունը, m -ը՝ հրթիռի զանգվածը, m_k -ն՝ թռիչքի ակտիվ մասի վերջում հրթիռի զանգվածը, v -ն՝ թռիչքի

արագությունը, λ -ն՝ հրթիռի հետագծի թեքման անկյունը հորիզոնի նկատմամբ, C_x -ը՝ հրթիռի դիմադրության ուժի գործակիցը, ρ_H -ը՝ օդի խտությունը H բարձրության վրա (հաշվարկվում է՝ համաձայն միջազգային ստանդարտ մթնոլորտի), S -ը՝ հրթիռի միդելի հատույթի մակերեսը, g -ն՝ ազատ անկման արագացումը, T -ն՝ հրթիռի շարժիչի քարշուժը, x -ը և y -ը՝ հրթիռի ծանրության կենտրոնի կոորդինատները արձակման կետի նկատմամբ, իսկ t_k -ն՝ հետագծի ակտիվ մասի (շարժիչի աշխատանքի) տևողությունը:


Մշակված համակարգչային ծրագրի միջոցով ստացված Մ-210Ֆ հրթիռի թռիչքի հետագիծը առավելագույն հեռահարության դեպքում ներկայացված է նկ. 2-ում:




Նկ. 2. Մ-210Ֆ հրթիռի թռիչքի հետագիծը՝ մշակված համակարգչային ծրագրի գրաֆիկական ինտերֆեյսում

Արդյունքների ամփոփում: Հիմնվելով Մ-210Ֆ հրթիռի հեռահարության աղյուսակներում [11] ներկայացված տվյալների վրա՝ մշակված համակարգչային ծրագրով իրականացվել է դրա թռիչքի մոդելավորում արձակման աղյուսակային անկյունների համար, և ստացված հեռահարությունները համեմատվել են աղյուսակային արժեքների հետ:

Աղյուսակային և առաջարկվող լուծման միջոցով ստացված հեռահարությունները՝ կախված արձակման անկյուններից (ծովի մակարդակից արձակելու պարագայում), ներկայացված են նկ. 3-ում, իսկ ստացված հեռահարությունների հարաբերական շեղումները, աղյուսակային տվյալներից տոկոսային արտահայտմամբ, կախված արձակման անկյուններից, բերված են նկ. 4-ում:



Նկ.3. Հեռահարության կախվածությունը արձակման անկյունից



Նկ. 4. Հաշվարկված հեռահարությունների հարաբերական շեղումները համապատասխան աղյուսակային տվյալներից

Ստացված շեղումները (միջին հարաբերական բացարձակ շեղումը՝ 3,6%, բացարձակ շեղումների տիրույթը՝ 0.49...17,06%) մոտ են [10]-ում ներկայացված մոդելավորման շեղումների սահմաններին (10 %):

Առաջարկվող լուծման մեջ շեղումների ստացումը մեծ մասամբ պայմանավորված է փողից հրթիռի դուրս գալու ընթացքում փողի առանցքի նկատմամբ

հրթիռի թեքումը մոդելավորող ճշգրիտ եռաչափ մոդելավորման բացակայությամբ և որպես մուտքային տվյալ կիրառվող բնութագրերում առկա շեղումներով. մասնավորապես՝ էական դեր են խաղում աերոդինամիկական բնութագրերի հաշվարկման համար կիրառված կիսաէմպիրիկ հաշվարկային մասի անճշտությունները:

Եզրակացություն: Մշակված ծրագրային լուծումն իրականացնում է հրթիռների թռիչքի դինամիկայի մոդելավորում և կարող է կիրառվել դրանց նախնական մշակման, հեռահարության աղյուսակներ ստեղծելու և կրակի կառավարման ավտոմատացված համակարգերի մշակման համար: Հրթիռների մշակման փուլում այն թույլ է տալիս գնահատել դրանց հեռահարությունը, դրա կախվածությունը տարատեսակ կառուցվածքային պարամետրերից, իրականացնել դրանց օպտիմալացում և կազմել հեռահարության աղյուսակներ: Մ-210Ֆ հրթիռի օրինակով ստացված արդյունքները ցույց են տալիս առաջարկվող լուծումների կիրառելիությունը իրական պայմաններում իրական հրթիռների դեպքում:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21DP-1B018 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Hemsch M.J.** Tactical Missile Aerodynamics: General Topics.- American Institute of Aeronautics and Astronautics, 1992. – 731 p.
2. **Hemsch M.J., Mendenhall M.** Tactical missile aerodynamics: Prediction methodology.- American Institute of Aeronautics and Astronautics, 1992. – 766 p.
3. **Петров К.П.** Аэродинамика ракет. – М.: Машиностроение, 1977. – 136 с.
4. **Петров К.П.** Аэродинамика элементов летательных аппаратов. – М.: Машиностроение, 1985. – 272 с.
5. **Краснов Н.Ф.** Аэродинамика. Ч. II. Методы аэродинамического расчета. – М.: Высшая школа, 1980. – 416 с.
6. **Краснов Н.Ф.** Основы аэродинамического расчета: Аэродинамика тел вращения, несущих и управляющих поверхностей. Аэродинамика летательных аппаратов. – М.: Высшая школа, 1981. – 496 с.
7. **Григорьев В.Г., Филиппов В.Б.** Синтез оптимального облика и оценка боевых возможностей управляемой ракеты “воздух-воздух” / Под ред. И.Е. Казакова. – М.: ВВИА им. Н.Е. Жуковского, 1986. – 99 с.
8. **Eltaj A., Darag S.A.** Aerodynamic Coefficients Investigation of GRAD Rocket Using Computational Fluid Dynamics// Journal of Engineering and Computer Science (JECS).-2021.- 22(3).- P.9-18.
9. **Tun N.L., Thuri M., Li Z.** Aerodynamic Coefficients Prediction for 122 mm Rocket by Using Computational Fluid Dynamics// In IOP Conference Series: Materials Science and Engineering.- IOP Publishing, 2020.- Vol. 816, N1.-P.012010.

10. Антуневич А.Л., Ильёв И.Г. Оценка эффективности стрельбы подразделений реактивной артиллерии при целенаправленном изменении параметров рассеивания снарядов// Сборник научных статей Военной академии Республики Беларусь.- 2017.- № 32.- С. 12-21.
11. ТС-74Г Выдержки (Таблицы стрельбы ОФ-реактивными снарядами М-21ОФ из БМ-21 (ТС-74Г)). [Электронный ресурс], URL: https://vk.com/doc12087859_412622814?hash=9qzZlEnzzh4GHubMOavDjqMJLyNZQbfO9RIztR8ivJk (дата обращения: 23.07.2023).

ՄՊԸ «Իմպուլս»-ի, ԵՊՀ: Նյութը ներկայացվել է խմբագրություն 18.07.2023:

А.А. БАГИЯН, О.Э. САРГСЯН, А.А. ГРИГОРЯН

ВОПРОСЫ ТОЧНОСТИ ЧИСЛЕННОГО МОДЕЛИРОВАНИЯ ВНЕШНЕЙ БАЛЛИСТИКИ РАКЕТ НА ПРИМЕРЕ РАКЕТЫ М-21ОФ

На примере ракеты М-21ОФ исследованы отклонения результатов, полученных в результате применения компьютерной программы, разработанной для решения уравнений внешней баллистики ракет методом численного моделирования. Показана применимость разработанной компьютерной программы в реальных задачах в случае отсутствия табличных данных и при разработке новых типов ракет для оценки их дальноточности и составления баллистических таблиц.

Ключевые слова: внешняя баллистика, аэродинамика ракет, вычислительные методы, численное моделирование.

A.H. BAGHIYAN, H.E. SARGSYAN, A.A. GRIGORYAN

THE ACCURACY OF NUMERICAL SIMULATION OF HUROKET EXTERNAL BALLISTICS BASED ON THE EXAMPLE OF THE M-21OF ROCKET

Using the example of the M-21OF rocket, the deviations of the results obtained by the software developed for solving the equations of external ballistics of rockets by computational methods, are investigated. The applicability of the developed software in real problems in case of the absence of tabular data and during the development of new types of rockets for evaluating their range and compiling ballistic tables is shown.

Keywords: external ballistics, rocket aerodynamics, computational methods, numerical simulation.

ՀՏԴ 621.937

ԱՎՏՈՄԱՏԱՑՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

DOI: 10.53297/0002306X-2023.v76.3-365

Ն.Հ. ՉՈՒԽԱՋՅԱՆ


**«ՄԱԳԼԵՎ» ԳՆԱՑՔԻ ԷԼԵԿՏՐԱՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԿԱԽՈՑԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ
ՆԱԽԱԳԾՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

Քննարկվել են «մագլև» գնացքի էլեկտրամագնիսական կախոցի նախագծման խնդրի առանձնահատկությունները: Մշակվել է ծրագրային գործիք, որը հնարավորություն է տալիս ավտոմատացնել էլեկտրամագնիսական կախոցի նախագծման գործընթացը՝ մուտքային պարամետրերի արժեքների առաջադրմամբ և կախոցի բնութագրական մեծությունների արժեքների որոշմամբ: Մշակված ավտոմատացված համակարգում լուծվում են կախոցի նախագծման ուղիղ և հակադարձ խնդիրները, հաշվարկվում են կառավարման փաթույթի պարամետրերը, օպտիմալացվում են բնութագրական մեծությունների արժեքները: Ներկայացվում են համակարգի կառուցվածքային սխեմաները և դասերը:

Առանցքային բառեր. «մագլև» գնացք, էլեկտրամագնիսական կախոց, ծրագրային գործիք, ավտոմատացված նախագծման համակարգ, մաթեմատիկական մոդել, կառուցվածքային սխեմա, նպատակային ֆունկցիա:

Ներածություն: «Մագլև» տիպի արագընթաց գնացքները, ի տարբերություն սովորական գնացքների, որոնց անիվները գլորվում են երկաթգծի վրայով, «ճախրում» են գնացքի և շարժուղու միջև ձևավորված օդային շերտի վրայով [1-8]: Այս գնացքները շարժուղուց վեր են բարձրացվում և շարժման ընթացքում շարժուղու նկատմամբ որոշակի բարձրությամբ պահպանվում էլեկտրամագնիսական կախոցի միջոցով. էլեկտրամագնիսի մագնիսալարի բևեռների և խարսխի միջև գործող էլեկտրամագնիսական ուժը ձգում է մագնիսալարը դեպի խարսխը և դրանով իսկ տեղաշարժում խարսխին կցված (հենված) գնացքի շարժակազմն ու այն վեր բարձրացնում շարժուղուց: Բնականաբար, գնացքը բարձրացնելու համար այդ ուժի արժեքը պետք է գերազանցի կախոցի մագնիսալարի հակազդող ուժի արժեքը՝ գնացքի կշիռը, իսկ գնացքը որոշակի դիրքում կայուն պահելու համար էլեկտրամագնիսական ուժի արժեքը պետք է հավասարվի հակազդող ուժի արժեքին [8]: Նկ. 1-ում պատկերված է «մագլև» գնացքի էլեկտրամագնիսական կախոցը, որի նախագծման ընթացքում որոշվում են էլեկտրամագնիսի չափերը, ընտրվում անհրաժեշտ նյութերը, հաշվարկվում բնութագրական մեծությունների արժեքները, ստուգվում և ապահովվում սարքի աշխատունակության համար անհրաժեշտ

պայմանները: Մեր նախորդ աշխատություններում, կախոցի նախագծման արդիական ու կարևոր խնդրի լուծման նպատակով, կազմվել են կախոցի մագնիսական շղթայի փոխարինման սխեման և մաթեմատիկական մոդելը, էլեկտրամագնիսի կառավարման փաթույթի մագնիսաշարժ ուժի (ՄՇՈՒ) բնութագրական արժեքների որոշման և կառավարման փաթույթի հաշվարկի եղանակները, ձևակերպվել և գենետիկական ալգորիթմի կիրառմամբ լուծվել է կախոցի օպտիմալ նախագծման խնդիրը [5-8]:




*Նկ.1. Նախագծվող էլեկտրամագնիսական կախոցի կառուցվածքային սխեման.
1-կառավարման փաթույթ (տեղադրված է մագնիսալարի հիմքի վրա), 2 - միջուկ,
3 - խարսխ, l_h - խարսխի երկարությունը, b_h - խարսխի հաստությունը, a_v - միջուկի
հաստությունը, b_v - միջուկի լայնությունը, l_v - միջուկի երկարությունը, l_h - հիմքի
երկարությունը, b_h - հիմքի հաստությունը, δ - աշխատանքային օդային բացակների չափը
(երկարությունը)*

Նախագծման ավտոմատացման համակարգը: Այս աշխատանքում նկարագրվում է էլեկտրամագնիսական կախոցի ավտոմատացված նախագծման համակարգը, որը ստեղծվել է վերը շարադրված հետազոտությունների արդյունքների հիման վրա: Մշակված համակարգը հնարավորություն է տալիս առաջադրված պայմաններին համապատասխան նախագծել «մագլև» գնացքի շահագործման համար պիտանի էլեկտրամագնիսական կախոց՝ օգտագործվող նյութերի և սարքի շահագործման համար պահանջվող էլեկտրական հզորության նվազագույն արժեքներով: Նախագծման ավտոմատացված համակարգն իրականացվել է C++ ծրագրավորման լեզվով և բաղկացած է 3 հիմնական ֆունկցիոնալ շերտերից.

- գրաֆիկական ինտերֆեյսի միջոցով տվյալների մուտքագրման և արդյունքների արտածման շերտ,

- տվյալների վավերացման շերտ,
 - միջուկ, որը պատասխանատու է բոլոր անհրաժեշտ հաշվարկների կատարման համար:


Գրաֆիկական ինտերֆեյսը: Գրաֆիկական շերտը նախագծողի և ավտոմատացված համակարգի երկխոսությանը հարմարեցված ինտերֆեյս է, որն ամբողջությամբ իրականացվել է Qt գրաֆիկական տարրերի գրադարանի միջոցով: Համակարգի մեկնարկի պահից բացվում է հիմնական պատուհանը (նկ. 2), որը նախագծողին լուծվող խնդրի տեսակն ընտրելու հնարավորություն է տալիս: Խնդիրները չորսն են՝ էլեկտրամագնիսական կախոցի նախագծման ուղիղ խնդիր [5], նախագծման հակադարձ խնդիր [5], կախոցի կառավարման փաթույթի նախագծային հաշվարկ [6], էլեկտրամագնիսական կախոցի բնութագրական մեծությունների օպտիմալացում [7]:




Նկ.2. Հիմնական պատուհանը

Խնդրի տեսակի ընտրությունից հետո բացվում է նոր համապատասխան պատուհան (նկ. 3), որը նախագծողին հնարավորություն է տալիս՝ մուտքագրելու էլեկտրամագնիսական նախագծվող կախոցի պարամետրերի մուտքային արժեքները: Խնդրի տեսակից կախված՝ մուտքային պարամետրերը կարող են տարբեր լինել, օրինակ, ուղիղ խնդրի լուծման համար պահանջվող պարամետրերն են՝ կախոցի զարգացրած էլեկտրամագնիսական ուժի արժեքը, ինդուկցիայի արժեքը, պողպատի տեսակը: Այս տվյալները բավարար են, որպեսզի մշակված համակարգն ավտոմատ կերպով որոշի էլեկտրամագնիսի խարսխի երկարությունը, խարսխի հաստությունը, միջուկի հաստությունը, միջուկի լայնությունը, միջուկի երկարությունը, հիմքի երկարությունը, հիմքի հաստությունը, աշխատանքային

օդային բացակների չափը (նկ. 3): Ցանկության դեպքում նախագծողը հնարավորություն ունի բոլոր նշված պարամետրերի արժեքները մուտքագրել նաև ինքնուրույն, որի համար առկա են համապատասխան անուններով գրաֆիկական տարրեր, որոնք կցված են նոր բացված պատուհանին (նկ. 4):




Նկ.3. Ուղիղ խնդրի պատուհանը




Նկ.4. Պարամետրերի արժեքների և պողպատի տեսակի ընտրության պատուհանը

Բոլոր անհրաժեշտ արժեքները մուտքագրելուց հետո սկսում է աշխատել տվյալները վավերացնող բլոկը, որը մուտքագրված տվյալների վավեր լինելու դեպքում ակտիվացնում է «հաշվարկել» կոճակը (ավտոմատացված համակարգի

երկրորդ շերտ): Միավ մուտքագրված արժեքների դեպքում այն նախագծողին հուշում է մուտքագրված տվյալների սխալ լինելու մասին՝ ուղղակիորեն ակտիվացնելով այն դաշտը, որը սխալ է պարունակում: Նշված «հաշվարկել» կոճակի սեղմումով սկսվում է խնդրի լուծման գործընթացը, իսկ լուծման արդյունքներն արտածվում են համապատասխան աղյուսակների տեսքով (նկ. 5): Այնուհետև նույն պատուհանում ակտիվանում է հաջորդ խնդրին անցման կոճակը: Խնդիրների լուծման հերթականությունը ցույց է տրված նկ.6-ում:




Նկ.5. Խնդրի լուծման արդյունքների պատուհանը



Նկ.6. Համակարգում լուծվող խնդիրները և դրանց հերթականությունը

Այսպիսով, եթե նախագծողը լուծել է էլեկտրամագնիսական կախոցի ուղիղ խնդիրը, ապա այդ դեպքում «անցում դեպի հաջորդ խնդիր» կոճակը բացում է հակադարձ խնդրի լուծման համար նախատեսված պատուհանը (նկ. 7): Նոր պատուհանում մուտքային պարամետրերի համար նախատեսված դաշտերում ավտոմատ կերպով լրացվում են ուղիղ խնդրի ժամանակ մուտքագրված և լուծման ընթացքում ստացված համապատասխան արժեքները, ինչը նախագծողին ընձեռում է հերթական խնդրի լուծման գործընթացը սկսելու հնարավորություն:



Նկ.7. Հակադարձ խնդրի լուծման պատուհանը

Ավտոմատացված համակարգի միջուկը: Էլեկտրամագնիսական կախոցի նախագծման բոլոր չորս խնդիրները (նկ.6) լուծվում են ավտոմատացված համակարգի երրորդ շերտում՝ միջուկում: Այստեղ էլեկտրամագնիսական կախոցը և դրա բաղադրիչները ներկայացված են համապատասխան դասերի միջոցով: Նկարագրենք էլեկտրամագնիսական կախոցի նախագծման թվարկած չորս խնդիրների լուծման մեթոդները:

Ուղիղ խնդրի լուծման նպատակը էլեկտրամագնիսական կախոցի մագնիսաշարժ ուժի այն արժեքի որոշումն է, որն անհրաժեշտ է գնացքի առաջադրված զանգվածը առաջադրված բացակի չափով օդում պահելու համար: Խնդրի լուծման համար անհրաժեշտ է առաջադրել հետևյալ մուտքային տվյալները՝ վագոնի կշիռը, մեկ վագոնի կախոցների քանակը, էլեկտրամագնիսական կախոցի աշխատանքային օդային բացակի չափը, էլեկտրամագնիսական կախոցի չափերը, մագնիսալարի պողպատի տեսակը և հաշվարկների անհրաժեշտ ճշգրտությունը:

Ավտոմատացված համակարգում պարամետրերը ներկայացվում են mag_suspension դասին պատկանող անդամների տեսքով [9], որի նպատակն է


նկ.1-ում պատկերված կախոցի և դրան համապատասխան պարամետրերի ներկայացումը: `mag_suspension` դասի օբյեկտը `mag_model` դասի անդամ է և օգտագործվում է համապատասխան հաշվարկներ կատարելու համար: `mag_model` դասը էլեկտրամագնիսական կախոցի [5]-ում նկարագրված մաթեմատիկական մոդելի իրականացումն է C++ ծրագրավորման լեզվի միջոցով [9-11]: Այդ դասի հիմնական նպատակը համապատասխան ինտերֆեյսի ապահովումն է էլեկտրամագնիսական կախոցի ուղիղ և հակադարձ խնդիրների լուծման, ինչպես նաև կառավարման փաթույթի հաշվարկման համար: Թվարկված խնդիրների լուծման ընթացքում ստացված բոլոր արդյունքները պահպանվում են `susp_data` տիպի ստրուկտուրայում, որի օբյեկտը փոխանցվում է `mag_model`-ին համապատասխան ինտերֆեյսի միջոցով՝ `calculate_direct` [9, 10]: Այսպիսով, ուղիղ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է `mag_suspension` դասի և `susp_data` ստրուկտուրայի օբյեկտները փոխանցել `mag_model` դասի օբյեկտին այդ դասի համապատասխան ինտերֆեյսի միջոցով, իսկ հաշվարկների ավարտից հետո արդյունքները հասանելի կլինեն փոխանցված `susp_data` ստրուկտուրայի օբյեկտի միջոցով:

Հակադարձ խնդիրը ուղիղ խնդրի լուծման ստուգողական հաշվարկն է [5], և ուղիղ խնդրի լուծման ընթացքում ստացված արդյունքները հակադարձ խնդրի մուտքային տվյալներն են: Այս դեպքում մագնիսաշարժ ուժի հաշվարկված արժեքի հիման վրա որոշվում է էլեկտրամագնիսական ուժի այն արժեքը, որը կարող է զարգացնել նախագծվող կախոցը [5]: Ավտոմատացված համակարգի միջոցով հակադարձ խնդիրը լուծելու համար հարկավոր է ուղիղ խնդիրը լուծելուց հետո կանչել `mag_model` դասի համապատասխան ֆունկցիան՝ `calculate_reverse`, փոխանցելով `susp_data` ստրուկտուրայի այն օբյեկտը, որը փոխանցվել էր ուղիղ խնդիրը լուծելու համար, քանի որ այդ `susp_data` օբյեկտի այն դաշտերի արժեքները, որոնք անհրաժեշտ են հակադարձ խնդրի լուծման համար, նախապես հաշվարկվել և սկզբնարժեքավորվել են ուղիղ խնդրի լուծման ժամանակ:

Հակադարձ խնդրի լուծման ընթացքում ստացված արժեքները նույնպես պահպանվում են `susp_data` ստրուկտուրայի օբյեկտի համապատասխան դաշտերում և այդ օբյեկտի միջոցով փոխանցվում կառավարման փաթույթը հաշվարկելու [6] համար նախատեսված `mag_model` դասի `calculate_coil` ֆունկցիային ու կառավարման փաթույթի հաշվարկի ավարտից հետո հասանելի են դառնում նույն `susp_data` ստրուկտուրայի օբյեկտի միջոցով:

Նշենք, որ `susp_data` ստրուկտուրան շատ կարևոր նշանակություն ունի վերը նշված խնդիրների լուծման ժամանակ՝ անհրաժեշտ մուտքային տվյալների և խնդրի լուծման արդյունքների պահպանման համար: Այս խնդիրների լուծման համար ավտոմատացված համակարգի համապատասխան հատվածն ունի նկ. 8-ում պատկերված կառուցվածքը [9, 12]: Այստեղ `steel` դասը ներկայացնում է մագնի-


սալարի համար ընտրված պողպատի տեսակը: Նշենք, որ նախագծվող համակարգի համար ստեղծվել է պողպատի տեսակների գրադարան, և կախոցը նախագծող ինժեներին հնարավորություն է տրվում ընտրել համապատասխան տեսակը: Իր հերթին steel դասն ընդգրկում է curve դասի օբյեկտ, որն օգտագործվում է մագնիսալարի համար ընտրված պողպատի մագնիսական կորը ներկայացնող մագնիսական լարվածության և մագնիսական ինդուկցիայի արժեքները որոշելու համար:



Նկ. 8. Էլեկտրամագնիսական կախոցի ուղիղ և հակադարձ խնդիրների լուծման համար նախատեսված ավտոմատացված համակարգի հատվածի կառուցվածքի UML ներկայացումը

Հերթական խնդիրը, որը կարող է լուծել մշակված ծրագրային գործիքը, էլեկտրամագնիսական կախոցի օպտիմալ բնութագրերի որոշումն է [10]: Այս նպատակով mag_model դասն ընդարձակվել է նոր` ratio_mag_model ժառանգ դասի սահմանման միջոցով, որը հնարավորություն է տալիս հատուկ եղանակով սկզբնարժեքավորել mag_suspension դասի օբյեկտը: Այն սկզբնարժեքավորվում է էլեկտրամագնիսական կախոցի չափերի միջև հարաբերությունները նկարագրող գործակիցների միջոցով [7], որոնց արժեքները ընտրվում են նախապես սահմանված տիրույթից և պահպանվում susp_data դասի ժառանգ ratio_susp_data դասի միջոցով: ratio_susp_data դասի օբյեկտը փոխանցվում է ratio_mag_model դասին` էլեկտրա-

մագնիսական կախոցի ուղիղ, հակադարձ խնդիրների լուծման և կառավարման փաթույթի հաշվարկները կատարելու համար, որպեսզի հաջորդ փուլում լուծվի օպտիմալացման խնդիրը (նկ. 9) [9-13]:




Նկ.9. ratio_mag_model և ratio_susp_data դասերի կառուցվածքի UML ներկայացումը

Որպես օպտիմալացման խնդրի լուծման ալգորիթմ օգտագործվում է գենետիկ ալգորիթմը [7], իսկ դրա իրականացումը ավտոմատացված համակարգում ներկայացնելու համար սահմանվում է GenOptimizer դասը, որն իրականացնում է գենետիկ ալգորիթմի բոլոր անհրաժեշտ գործառնությունները՝ նախնական պոպուլյացիայի ստեղծումը, խաչասերումը, մուտացիան, առանձնյակների ընտրումն և տեղաբաշխումն արդեն գոյություն ունեցող պոպուլյացիայում [9-11]: Այս դասը օգտագործողին հնարավորություն է տալիս հանձնարարել նախընտրած նպատակային ֆունկցիան, սկզբնական պոպուլյացիայի մեծությունը և յուրաքանչյուր իտերացիայի ընթացքում խաչասերվող առանձնյակների քանակը:

Նպատակային ֆունկցիաները օգտագործողի կողմից սահմանված հատուկ դասեր են (ֆունկտոր) [12]: Ավտոմատացված համակարգում լուծվում են սահմանված երեք նպատակային ֆունկցիաներով օպտիմալացման խնդիրներ՝ կախոցի նվազագույն էլեկտրական հզորության որոշում, կախոցի ակտիվ նյութերի (պղինձ և

պողպատ) նվազագույն գնի որոշում և նվազագույն միջին քառակուսային շեղումներն ապահովող բազմաչափանիշային օպտիմալացման խնդրի լուծում:

Օպտիմալացման գործընթացը սկսելու համար ստեղծվել է GenOptimizer դասի օբյեկտ՝ փոխանցելով նպատակային ֆունկցիայի տիպը: Այդ օբյեկտի միջոցով կանչվում է runOptimization համապատասխան անդամ-ֆունկցիան: Օպտիմալացման ալգորիթմի առավելագույն իտերացիաների քանակը [10] պատկերված օրինակում հազար է, սա GenOptimizer դասում սահմանված նախնական արժեքն է, որը օգտագործողը կարող է փոխել համապատասխան ինտերֆեյսի միջոցով: Օպտիմալացման գործընթացը ավարտելուց հետո ծրագիրը վերջնական արդյունքն արտածում է էկրանին կամ գրում է հանձնարարված ֆայլում: Այստեղ պահպանված արդյունքները կարող են օգտագործվել որպես սկզբնական պոպուլյացիայի արժեքներ՝ հերթական օպտիմալացման գործընթացի ժամանակ: GenOptimizer դաս պոպուլյացիայի կառուցվածքը ներկայացված է նկ. 10-ում [10, 12-16]:



Նկ. 10. Ավտոմատացված համակարգի GenOptimizer դասի կառուցվածքի UML ներկայացումը

Եզրակացություն: Այսպիսով, մշակվել է ավտոմատացված համակարգ, որը հնարավորություն է տալիս նախագծել «մագլև» գնացքի էլեկտրամագնիսական կախոցը, լուծել նախագծման ուղիղ և հակադարձ խնդիրները, որոշել կառավարման փաթույթի պարամետրերի արժեքները, ինչպես նաև հաշվարկել կախոցի բնութագրերի օպտիմալ արժեքները՝ հանձնարարված նպատակային ֆունկցիաների համար:

Աշխատանքը կատարվել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի «Ավտոմատացում և էլեկտրամագնիսական համակարգեր» բազային գիտահետազոտական լաբորատորիայում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Hyung-Woo Lee, Ki-Chan Kim, Ju Lee.** Review of Maglev Train Technologies Korea// IEEE Transactions on Magnetics.- 2006. - Vol. 42, N 7.-P. 1917-1925.
2. **Kim, Mooncheol Won** Design and Control of Levitation and Guidance Systems for a Semi-High-Speed Maglev Train // Journal of Electrical Engineering and Technology.- 2017. - N 12(1). – P. 117-125.
3. **Գրիգորյան Ա.Խ., Ավետիսյան Ա.Գ., Շահբազյան Ա.Ա., Ապետյան Ն.Ց.** Էլեկտրամագնիսական կախոցի ավտոմատացված նախագծման համակարգ // ՀՀ ԳԱԱ և ՀԱՊՀ Տեղեկագիր. Տեխնիկական գիտությունների սերիա. – 2016. - Հ. LXIX, N 3. - էջ 315-325:
4. **Գրիգորյան Ա.Խ., Ապետյան Ն.Ց.** Մագնիսական բարձով արագընթաց գնացքներ // Գիտության աշխարհում. - 2017. - 1.- էջ 58-62:
5. **Գրիգորյան Ա.Խ., Զուխաջյան Ն.Հ.** «Մազլև» գնացքի կախոցի էլեկտրամագնիսական համակարգի մագնիսական շղթայի փոխարինման սխեման և մաթեմատիկական մոդելը // ՀՀ ԳԱԱ և ՀԱՊՀ Տեղեկագիր. Տեխնիկական գիտությունների սերիա. – 2019. - Հ. LXXII, N 1. – էջ 47-56:
6. **Чухаджян Н.Г.** К расчету обмотки управления электромагнитного подвеса поезда МАГЛЕВ // Сборник трудов XVII Международной научно-практической конференции ИНФО-2020. -2020. - С. 316-319.
7. **Чухаджян Н.Г., Григорян А.Х., Аветисян А.Г.** Оптимальное проектирование электромагнитного подвеса поезда “МАГЛЕВ” с применением генетического алгоритма // Вестник НПУА: Информационные технологии, электроника, радиотехника. -2022. –N2.- С. 23-32.
8. **Գրիգորյան Ա.Խ., Զուխաջյան Ն.Հ.** «Մազլև» գնացքի էլեկտրամագնիսական կախոցի կառավարման փաթեթի ՄՇՈՒ-ի բնութագրական արժեքների որոշումը //ՀՃԱ Լրաբեր. – 2019. - Հ. 16, հ. 2. – էջ 167-171:
9. **Hiller S.F., Gerald J.L.** Introduction to operations research. – New York: McGraw-Hill, 2014. -1050 p.
10. **Jensen A. Paul, Jonathan B.** Operations Research: Models and Methods. - John Wiley & Sons, Australia, 2002. - 675 p.
11. **Hakanen Jussi, Allmendinger Richard.** Multiobjective optimization and decision making in engineering sciences // Optimization and Engineering. – 2021. -22. –P.1031-1037.
12. **Meyers S.** Effective Modern C++. - O'Reilly Media, Inc., 2014. - 319p.
13. **Gamma E., Helm R., Johnson R., Vlissides J.** Design Patterns: Elements of reusable object-oriented software. - Addison-Wesley, Nov. 2000. – 416p.
14. **Marius Bancila.** Modern C++ Programming Cookbook. - Packt Publishing, 2020. -430p.
15. **Fedor Pikus.** Hands-on Desing Patterns with C++. - Packt Publishing, 2019. -512p.
16. **Robert Martin.** The Clean Coder: A Code of Conduct for Professional Programmers. – Pearson, 2011. -210p.

VMS Software Inc. Նյութը ներկայացվել է խմբագրություն 18.07.2023:

Н.Г. ЧУХАДЖЯН

**АВТОМАТИЗИРОВАННАЯ СИСТЕМА ПРОЕКТИРОВАНИЯ
ЭЛЕКТРОМАГНИТНОГО ПОДВЕСА ПОЕЗДА “МАГЛЕВ”**

Обсуждены особенности проектирования электромагнитного подвеса поезда “Маглев”. Разработан инструмент программного обеспечения, позволяющий автоматизировать процесс проектирования электромагнитного подвеса с заданием значений входных параметров и определением значений характерных величин подвеса. В разработанной автоматизированной системе решаются прямая и обратная задачи проектирования электромагнитного подвеса, определяются параметры обмотки управления, оптимизируются значения характерных величин. Представлены структурные схемы и классы системы.

Ключевые слова: поезд “Маглев”, электромагнитный подвес, программный инструмент, автоматизированная система проектирования, математическая модель, структурная схема, целевая функция.

N.H. CHUKHAJYAN

**AN AUTOMATED SYSTEM FOR DESIGNING THE
ELECTROMAGNETIC SUSPENSION OF THE TRAIN “MAGLEV”**

The design features of the electromagnetic suspension of the Maglev train are discussed. A software tool has been developed, allowing to automate the process of designing the electro-magnetic suspension by setting the values of the input parameters and determining the values of the characteristic quantities of the suspension. In the developed automated system, the direct and reverse tasks of designing an electromagnetic suspension are solved, the parameters of the control winding are determined, the values of the characteristic quantities are optimized. Block diagrams schemes and system classes are presented.

Keywords: “Maglev” train, electromagnetic suspension, software tool, automated design system, mathematical model, block diagram, objective function.

DOI: 10.53297/0002306X-2023.v76.3-377

Մ.Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ¹, Ա.Ս. ԱՎԱՆԵՍՅԱՆ²ՄԻ ԷՋ ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արցախի պետական համալսարանի հիմնադրումը կարևոր իրադարձություն էր նորանկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշակութային կյանքում: Արցախի ազգաբնակչության համար դժվարին ժամանակամիջոցում պետական համալսարանի հիմնադրման գործընթացի պատմագիտական վերախմաստավորումը պահանջված է հիշարժան հորեղանի արժեքավորելու, պատեհաժամորեն քաղաքական համարձակության դրսևորման և ճկուն որոշումների ընդունման ոչ հեռու անցյալի փորձը տարածելու, ստեղծված իրավիճակում Արցախի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի առաջ ծառացած խնդիրների լուծմանը արդյունավետ մոտեցումներ գտնելու առումներով:

Սույն ուսումնասիրության նպատակն է արխիվային փաստաթղթերի և սկզբնաղբյուրային նշանակություն ձեռք բերած աշխատությունների վերլուծության հիման վրա ամբողջացնել Արցախի պետական համալսարանի հիմնադրման գործընթացը և վերախմաստավորել դրա պատմական նշանակությունը Արցախի Հանրապետության ազգային (հայեցի) գիտակրթական համակարգի տեսանկյունից:

Այդ նպատակին հասնելու համար առաջադրել ու լուծել ենք հետևյալ հետազոտական խնդիրները. նախ ցույց ենք տվել Հայկական ԽՍՀ հետ վերամիավորվելու ԼՂԻՄ ազգաբնակչության ծավալած ժողովրդավարական պայքարի համար ՀԽՍՀ բարձրագույն կրթական համակարգում Կիրովականի (Վանաձորի) պետական մանկավարժական ինստիտուտի (ԿՄԻ) Ստեփանակերտի և ՀԽՍՀ այլ պետական բուհերի մասնաճյուղերի (բաժանմունքների) ներառման ինչպես կրթական, այնպես էլ քաղաքական ու բարոյահոգեբանական նշանակությունը, ՀԽՍՀ բուհական համակարգում Ստեփանակերտի պետական մանկավարժական նախկին ինստիտուտի ժամանակավոր փակումից հետո ստեղծված ԿՄԻ Ստեփանակերտի բաժանմունքի և ՀՊՀՀ Ստեփանակերտի մասնաճյուղի ընդգրկումը դիտարկել

¹ 1994 թ. ավարտել է ԼՂՀ պատմաբանասիրական ֆակուլտետի «Պատմություն և օտար լեզու», բաժինը: 1999-2023 թթ. ԱրՊՀ պատմության (այնուհետև՝ պատմության և քաղաքագիտության) ամբիոնի դասախոս, 2008-ից՝ դոցենտի պաշտոնակատար է:

² 1990 թ. հունվարին նշանակվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի հեռակա ֆակուլտետի Ստեփանակերտի նորաստեղծ ընդհանուր տեխնիկական բաժանմունքի տնօրեն, 1991 թ. ԵրՊԻ Ստեփանակերտի մասնաճյուղի տնօրեն, 1992-ին՝ Լեռնային Ղարաբաղի (հետագայում՝ Արցախի) պետական համալսարանի առաջին ռեկտոր: 1994 թվականի հուլիսից աշխատել է ԱրՊՀ ֆիզիկայի ամբիոնի դոցենտ, 2004 թվականի հոկտեմբերից՝ ամբիոնի վարիչ: ՀՀ մանկավարժահոգեբանական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ-ակադեմիկոս է, ԼՂՀ և ՀՀ մի շարք համալսարանների պատվավոր դոկտոր ու պրոֆեսոր:

ենք ԼՂԻՄ հիմնարկ-ձեռնարկությունների՝ ՀԽՍՀ համապատասխան կառույցների մեջ ներառելու հեռանկարային քաղաքականության համատեքստում, վերախմաստավորել ենք ՀԽՍՀ-ի մեր հայրենակիցների գործունե աջակցությամբ խորհրդային ամբողջատիրության պայմաններում օրենսդրական ու բյուրոկրատական խոչընդոտները հաջողությամբ հաղթահարելու նախադեպը, Արցախի պետական համալսարանի հիմնադրումը կարևորել ենք որպես ԼՂՀ պետականության խորհրդանիշներից և որակավորված կադրերի դարբնոցներից մեկը:

Առանցքային բառեր. կրթություն, համալսարան, հանրապետություն, հորեյան, Արցախի Հանրապետություն, Հայաստան, հիմնադրում, պաշտոնական բացում, Շարժում:

Ինչպես յուրաքանչյուր պետության, այնպես էլ նորանկախ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության մշակութային կյանքում համալսարանի հիմնադրումը կարևոր իրադարձություն էր, որի առանձնահատկություններից հատկանշելի է, որ այն ինքնին հնարավոր էր դարձել Արցախի ազգաբնակչության համար դժվարին ժամանակներում, Ադրբեջանի ռազմական ագրեսիային դիմագրավելու պայմաններում: Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի հիմնադրման գործընթացի պատմագիտական վերախմաստավորումն արդիական է ու պահանջված՝ հիշարժան հորեյանի արժևորման, պատեհաժամորեն քաղաքական համարձակություն դրսևորելու և ճկուն որոշումներ ընդունելու, ոչ հեռու անցյալի փորձը տարածելու, ստեղծված իրավիճակում Արցախի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի առաջ ծառացած խնդիրների լուծմանը արդյունավետ մոտեցումներ գտնելու, նախադեպային օրինակը վերախմաստավորելու նկատառումներով:

Սույն ուսումնասիրության նպատակն է արխիվային փաստաթղթերի և սկզբնաղբյուրային նշանակություն ձեռք բերած աշխատությունների հիման վրա ամբողջացնել Լեռնային Ղարաբաղի (1996 թվականից՝ Արցախի) պետական համալսարանի հիմնադրման գործընթացը և վերախմաստավորել դրա պատմական նշանակությունը Արցախի Հանրապետության գիտակրթական համակարգի տեսանկյունից: Այդ նպատակին հասնելու համար առաջադրել ենք հետևյալ հետազոտական խնդիրները.

ա) ցույց տալ Հայկական ԽՍՀ հետ վերամիավորվելու ԼՂԻՄ ազգաբնակչության ծավալած ժողովրդավարական պայքարի համար ՀԽՍՀ բարձրագույն կրթական համակարգում ՀԽՍՀ պետական բուհերի Ստեփանակերտի բաժանմունքի ու մասնաճյուղի միավորմամբ ստեղծված Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի ներառման ինչպես կրթական, այնպես էլ քաղաքական ու բարոյահոգեբանական նշանակությունը,

բ) ՀԽՍՀ բուհական համակարգում ՀԽՍՀ պետական բուհերի Ստեփանակերտի բաժանմունքի ու մասնաճյուղի միավորմամբ ստեղծված Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի ընդգրկման գործընթացը դիտարկել ԼՂԻՄ

հիմնարկ-ձեռնարկությունների՝ ՀԽՍՀ համապատասխան կառույցների մեջ ինտեգրելու հեռանկարային քաղաքականության համատեքստում,

զ) վերաիմաստավորել ՀԽՍՀ մեր հայրենակիցների գործուն անակցությամբ խորհրդային ամբողջատիրության պայմաններում օրենսդրական ու բյուրոկրատական խոչընդոտները հաջողությամբ հաղթահարելու նախադեպը,

դ) Արցախի պետական համալսարանի հիմնադրումը կարևորել որպես ԼՂՀ պետականության խորհրդանիշներից մեկի և որակավորված կադրերի դարբնոցի կայացման նպատակասլաց գործընթաց:

Արցախի պետական համալսարանի հիմնադրման գործընթացին անդրադարձել են ինչպես բուհական համակարգի ներկայացուցիչները, այնպես էլ Արցախի պատմության նորագույն շրջանը ներկայացնող պատմաբանները: Խնդրո առարկա թեմայի ուսումնասիրվածության աստիճանի ներկայացումը, կարծում ենք, հնարավորություն կընձեռի ոչ միայն պատկերացում կազմել դրա պատմագրության մասին, այլ նաև որոշել սույն տողերի հեղինակների տեղը հիմնախնդրի գիտական ուսումնասիրության գործում:

Արցախի պետական համալսարանի ստեղծման պատմությունը հանգամանալից ուսումնասիրել և սկզբնաղբյուրների ու իրավակազմակերպական փաստաթղթերի հիման վրա առանձին գրքերում³ ու գիտական հոդվածներում⁴ հանգամանալից շարադրել է 1993-1994 թթ. ռեկտոր Արպատ Ավանեսյանը: ԱրՊՀ ստեղծման, ներառյալ կայացման գործընթացի ուսումնասիրությունները նա հետագայում շարունակել է այլ մասնագետների հեղինակակցությամբ⁵:

³ **Ավանեսյան Ա. Ս.**, ԼՂՀ (ԱրՊՀ). հայկական երկրորդ պետական համալսարան(1990-1994 թթ.), Ստ., «Դիզակ պլյուս», 2008, **նույնի**՝ Արցախի բուհական համակարգը և գիտակրթական ներուժը, Ստ., «Դիզակ պլյուս», 2008, 13-83, **նույնի**՝ Արցախի պետական համալսարան. ժամանակի պահանջով՝ ժամանակին համաքայլ: Արխիվային նյութերի ժողովածու, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (Պոլիտեխնիկ). Եր., ճարտարագետ, 2011, **նույնի**՝ Արցախի գիտակրթական համակարգ. կայացման ընթացք, զարգացման միտումներ, Ստ., «Դիզակ պլյուս», 2011, էջ 35-110, **նույնի**՝ Արցախի բուհական համակարգը. Ստ., «Դիզակ պլյուս», 2013, էջ 63-175, **Аванесян А. С.**, Арцахский государственный университет: по требованию времени – в ногу со временем (Сборник архивных документов), Е.б., Арт-принт, 2011 և այլն:

⁴ **Ավանեսյան Ա. Ս.**, Ամարասից մինչև Լեռնային Ղարաբաղի պետական համալսարան: Մանկավարժահոգեբանական գիտությունների ակադեմիա, գիտական հոդվածների ժողովածու, IV, Եր., 2005, էջ 33-45, **նույնի**, Համալսարանական կրթության ձևավորումը Արցախում և նրա հնարավոր ներառումը միջազգային կրթական համակարգում: Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, 1 (4), Եր., 2009, էջ 22-23, **նույնի**՝ Համալսարանական կրթության գործընթացը Արցախում, «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի «Լրատու», N 1, Ստ., 2007, էջ 3-27 և այլն:

⁵ **Ավանեսյան Ա. Ս., Հարությունյան Գ. Հ.**, Միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթության համակարգը ԼՂԻՄ-ում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում (1923-2018թթ.), Հատոր 4-րդ: Ստ., «Դիզակ պլյուս», 2019, էջ 343-382, **Аванесян А.С., Арутюнян Г.А.**, Система среднего профессионального

Արցախում բարձրագույն կրթության հիմնախնդիրներին անդրադարձել են նաև Հայաստանի բուհական համակարգի այն առաջատար մասնագետները⁶, ովքեր ծանրակշիռ ավանդ են ունեցել Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի ստեղծման գործում:

Խնդրո առարկա թեմային, մանավանդ Արցախի ազատագրական պայքարին, ԱրՊՀ մասնակցության հիմնահարցերին անդրադարձել է նաև պատմաբան Մհեր Հարությունյանը⁷:

Համալսարանի պատմության որոշ հարցեր լուսաբանված են հուշագրական⁸, կենսագրական և այլ բնույթի հրատարակություններում:

Համալսարանի հիմնադրման և կայացման գործընթացը լուսաբանվել է նաև պարբերական մամուլում⁹, որտեղ հանդիպում են ուշագրավ գնահատականներ, որոնք կարևոր են սույն ուսումնասիրության աղբյուրագիտական ատաղձը հարստացնելու տեսանկյունից:

Արցախյան շարժման վերագարթոնքի շնորհիվ համաժողովրդական պայքարի նվաճումներից կարելի է հատկանշել պետականության ստեղծումը, ինչը ռազմաքաղաքական մարտահրավերները հաղթահարելու նախադրյալներ է ստեղծել: Արցախում պետական շինարարության առանցքային ուղղություններից մեկը՝ կրթության զարգացման գրավականը, իրավամբ համարվել է Հայաստանի կրթական համակարգի մեջ այն ինտեգրելը: Բնչպես հայտնի է՝ Արցախյան շարժման պահանջներից էր հայ բնակչության հայեցի կրթության ապահովումը,

и высшего образования в НКАО и Нагорно-Карабахской Республике (1923-2018 гг.). Том четвертый. Ст., Дизак плюс, 2021, с. 317-354:

⁶ **Սուլեյմանյան Ս.**, Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի ստեղծման ակունքներում, Եր., 1998, **Էդոյան Ռ.**, Բարձրագույն կրթության խնդիրներն Արցախում 1988-1992 թթ., «Լրաբեր հասարակական գիտությունների», N 3, 2009, էջ 285-289:

⁷ **Բալայան Վ.Ռ., Բալայան Ռ.Ա., Հարությունյան Մ.Ա.**, Հուշամատյան սխրանքի, Ստ., «Իզակ պլուս», 2002, Անկախության նվիրյալները: ԱրՊՀ ուսանողները Արցախյան ազգային ազատագրական պայքարի տարիներին, Բալայան Վ.Ռ., Բալայան Ռ.Ա., Հարությունյան Մ.Ա., Եր., «Զանգակ-97», 2009, **Հարությունյան Մ.**, ԱրՊՀ-ն Արցախյան ազգային-ազատագրական պայքարի տարիներին, ԱրՊՀ գիտական ընթերցումներ/Զեկուցումների հիմնադրույթներ, 20-21 ապրիլի 2009թ., Եր., «Զանգակ-97», 2009, էջ 6-8, **Խույնի**՝ Արցախի մայր բուհի ուսանողությունը հայրենիքի պաշտպանության դիրքերում, «Խաղաղ Կովկասը տարածաշրջանի զարգացման գործին», ԼՂՀ և ՀՀ անկախությանը նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2011, էջ 235-244, ԱրՊՀ մասնակցությունը Արցախյան ազգային-ազատագրական պայքարին/Բալայան Ռ., Հարությունյան Մ., Մարումյան Ն., Առստամյան Ա., Ստ., 2012, **Հարությունյան Մ.**, Վերստին ազգային ազատագրական նորօրյա պայքարում Արցախի մայր բուհի դերի մասին, Արցախի պետական համալսարանի «Գիտական տեղեկագիր», Պրակ 1, Ստ., ԱրՊՀ հրատ, 2015, էջ 244-249 նն:

⁸ **Բարսեղյան Մ. Ե.**, Ճակատագրի խաչուղիներում, Ստեփանակերտ: «Դիզակ պլուս» հրատ., 2017. - 264 էջ (համալսարանի մասին էջ 204-240):

⁹ Արպատ Ավանեսյան. «Գիտական պոտենցիալ ունենք» (հարցազրույց), «Արցախ» (ԼՂՀ Գերագույն խորհրդի պաշտոնաթերթ), N 82, 29 դեկտեմբերի 1992 թ., էջ 3: Սողոմոնյան Ն., Բուհի տարեդարձը, «Արցախ», N 112, 13 հոկտեմբերի 1993 թ.: Հարությունյան Ա., Պատմություն, թե՛ օտար լեզու (Կեսարիներ՝ կեսարին, Աստծունը՝ Աստծուն), «Խաչեն» (Հասարակական-քաղաքական թերթ), N 1, 13 հունվարի 1994 թ., էջ 3: Արպատ Ավանեսյան. Մեր երազանքների նորածին մանուկը, «ԼՂՊ համալսարան» (Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանի պաշտոնաթերթ), N 1, հունվար 1994 թ., էջ 2:

ինչը, ըստ էության, հնարավոր էր միայն ինքնավար մարզը Հայկական ԽՍՀ կազմ վերադարձնելու շնորհիվ:

Այս համատեքստում առաջանցիկ նշանակություն էր ստացել բարձրագույն կրթության ներառումը ՀԽՍՀ համապատասխան համակարգում, քանի որ ոլորտի զարգացման և Արցախյան շարժման նպատակներից մեկի իրականացման այլ արդյունավետ ճանապարհ չկար, մանավանդ որ Ադրբեջանական ԽՍՀ ծայրահեղական իշխանությունները ամեն կերպ ստեղծում էին արհեստական խոչընդոտներ:

Գաղափարաքաղաքական պայքարի ու տեղեկատվական-քարոզչական պատերազմի պայմաններում ԼՂԻՄ միակ բուհի՝ Ստեփանակերտի պետական մանկավարժական ինստիտուտի պրոֆեսորադասախոսական և ուսանողական անձնակազմերը կարևոր առաքելություն ստանձնեցին՝ իրենց մտավոր ու կազմակերպչական կարողությունները ծառայեցնելով համաժողովրդական շարժման ծավալմանը: Ժողովրդավարական շարժումը ռեպրեսիվ մեթոդներով ճնշելու մոլուցքով տարված՝ ադրբեջանցի կուսակցական ու խորհրդային պաշտոնյաները թիրախավորեցին մեր լավագույն մտավորականներին և ուսանողներին, ընդհանրապես՝ հայրենասեր մտավորականների դարբնոցը դարձած Ստեփանակերտի պետական մանկավարժական ինստիտուտը, որը լուծարվեց միութենական կառավարության՝ ԽՍՀՄ մինիստրների խորհրդի 1988 թ. հոկտեմբերի 14-ի որոշմամբ¹⁰:

Որոշման տեքստում կարծես թե արտահայտված էր Արցախի հայ բնակչության այն իդեալ, որ ինստիտուտի հետ փակվում էր նաև ԼՂԻՄ-ում Ադրբեջանական ԽՍՀ ժողովրդական կրթության մինիստրության բուհական համակարգի գոյության և Խորհրդային Միության երկու սուբյեկտներից մեկի գաղութատիրական հավակնությունները խորհրդանշող Սովետական Ադրբեջանի 60-ամյա արյունոտ ներկայության վերջին էջը: Թերևս այս տրամաբանության համատեքստում կարելի է հասկանալ ինստիտուտը ժամանակավորապես փակելու Կոմկուսի Լեոնային Ղարաբաղի մարզկոմի և ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի գործկոմի առաջարկությունը, որը, ինչպես ակներև է խնդրո առարկա որոշման տեքստից, համաձայնեցված էր Ադրբեջանի Կոմկուսի կենտկոմի և ԽՍՀՄ ժողովրդական կրթության պետական կոմիտեի առաջարկության հետ:

«Ժամանակավորապես» փակելու դրույթը կարող էր նրբանկատություն լինել՝ ազգամիջյան լարված մթնոլորտում ավելորդ կրքեր չբորբոքելու նկատառումով, կամ թելադրված լինել հակամարտության չհանգուցալուծվածության պայմաններում ապագայի անորոշությամբ, այդուհանդերձ, այն պայքարի ելած ժողովրդի համար ինքնավար մարզում հանգամանքների անբարեհաջող դասավո-

¹⁰ *Ավանեսյան Ա.Ս.*, Արցախի գիտակրթական համակարգ. կայացման ընթացք, զարգացման միտումներ, էջ 34:

րության դեպքում, Ադրբեջանական ԽՍՀ ժողովրդական կրթության մինիստրության բուհական համակարգի վերակենդանացման իրական վտանգ էր ներկայացնում:

Բավական անհանգստացնող էին նաև այդ որոշման կիրարկման հետևանքներն այն փաստի հաշվառմամբ, որ Ստեփանակերտի պետական մանկավարժական ինստիտուտի ադրբեջանական բաժինը տեղափոխվեց Շուշի, այսինքն մնաց խռովահույզ Արցախում, իսկ ահա հայկական բաժինը՝ Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան մանկավարժական ինստիտուտում, այսինքն դուրս բերվեց մարզի տարածքից, երբ ազատագրական պայքարի գաղափարաքաղաքական փուլում այնքան պահանջված էին երիտասարդ ու գիտակից մարդիկ: Ճիշտ է, կարճատև հյուրընկալության ընթացքում արցախցի ուսանողներն ու դասախոսները նոր ուժ հաղորդեցին Վանաձորի մեր հայրենակիցների ժողովրդավարական շարժմանը և երկրաշարժի պատճառով վերադարձան Ստեփանակերտ, սակայն ապրեցին խոր ցավ ու հոգեբանական ցնցումներ: Այսպիսով, ձախողվեց Արցախյան շարժման կիզակետից արցախյան մտավորականության մի զգալի մասին հեռացնելու ադրբեջանական ֆունկցիոներների մտահղացման իրագործումը:

Ստեփանակերտում բարձրագույն կրթությունը կազմակերպելն անհնար էր դարձնում ԽՍՀՄ բարձրագույն դպրոցի այն ժամանակ գործող կանոնադրությունը, որը հնարամտորեն շրջանցելու ջանքերը պսակվեցին Ստեփանակերտում Վանաձորի մանկավարժական ինստիտուտի բաժանմունքի ստեղծմամբ: Հայկական ԽՍՀ ժողովրդական կրթության մինիստրության կոլեգիան 1989 թ. մարտի 13-ի որոշմամբ ստանձնում էր Ստեփանակերտում նախկին ինստիտուտի առկա և հեռակա ուսուցմամբ ուսանողական քանակակազմի կրթությունը շարունակելու և դասախոսական կազմի աշխատանքը կազմակերպելու գործը¹¹: Այդ և հետագա քայլերը Հայկական ԽՍՀ բարձրագույն կրթության համակարգում ներառելու միջոցով վերակենդանացրին Արցախի կազմալուծված բարձրագույն կրթությունը: Վանաձորի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունք ստեղծելու մասին Հայկական ԽՍՀ ժողովրդական կրթության կոլեգիայի որոշման և Հայկական ԽՍՀ ժողովրդական կրթության մինիստրության 1989 թ. մարտի 15-ի հրամանի¹² տեքստերից ակնհայտ է, որ այդ հույժ կարևոր ձեռնարկի իրականացմանը լծվում էին ոչ միայն Վանաձորի մանկավարժական ինստիտուտի, այլև Հայաստանի առաջատար այլ բուհերի անձնակազմերը, որոնք նյութական, մեթոդական և այլ կարգի անշահախնդիր օգնություն էին ցուցաբերում Հայկական ԽՍՀ բարձրագույն դպրոցի՝ Ստեփանակերտում առաջնեկը հիմնադրելու և կայացնելու գործին: Նշված հիմնադիր փաստաթղթերի ուսումնասիրությունը հանգեցնում է

¹¹ Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1171, ց. 1, գ. 4, թթ. 41-43:

¹² Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1171, ց. 1, գ. 30, թթ. 184-1863:

այն եզրակացությանը, որ, սկսած բաժանմունքի կառուցվածքից, աշխատակիցների հաստիքացուցակից, ֆակուլտետների, ամբիոնների և մյուս ստորաբաժանումների ցանկից, 1989 թ. պահանջվող ֆինանսավորման համար նախահաշվի նախագծից, վերջացրած բաժանմունքի վարչակազմի և բարձրագույն դպրոցի կանոնակարգով նախատեսված մյուս աշխատակիցների ընտրության, գիտական խորհրդի կազմի ձևավորման, ուսումնալաբորատոր սարքավորումների, կաբինետների, գույքի, գրականության և անհրաժեշտ այլ պարագաների Ստեփանակերտ տեղափոխման կազմակերպմամբ, իրականացվում էր Հայկական ԽՍՀ բուհական համակարգի առանցքային գործիչների ջանքերով ու գործուն մասնակցությամբ: Այդ առաքելության կատարման գործում անուրանալի դեր է կատարել Հայկական ԽՍՀ ժողովրդական կրթության կոլեգիայի նախագահ, մինիստր Ս. Հախումյանը, որի քաղաքացիական ու հայրենասիրական խիզախումը ստեղծված իրավիճակում կանխորոշել է նախաձեռնության հաջողությունը: Իսկ այդ որոշումները կյանքի են կոչվել Վանաձորի մանկավարժական ինստիտուտի ռեկտոր Ռ. Եղոյանի եռանդուն ջանքերի ու կազմակերպչական հմտությունների շնորհիվ: Հայկական ԽՍՀ բարձրագույն ուսումնական հաստատության նորամուտը Արցախի խորհրդանշում է մայր Հայաստանի արժանի զավակների աջակցությամբ ցանկացած դժվարություն հաղթահարելու և կարևոր նախաձեռնությունները կյանքի կոչելու մեր ժողովրդի անսասան կամքը, որը հիանալի կերպով դրսևորվեց նաև 1991-1994 թթ. Հայրենական պատերազմում անարգ թշնամու ագրեսիային միահամուռ դիմագրավելու ժամանակ:

